ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի
գիտական խորհրդի՝ 26.01.2026 թ. կայացած նիստի թիվ 6 արձանագրություն

Օրակարգ

1.2025-2026 ուս. տարվա առկա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2.Մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքի քննարկում:

3.Անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների թեկնածությունների հաստատում:
4.Հայցորդների ատեստավորում:
5.Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի թիվ 6 -րդ նիստին 36 անդամներից ներկա էին 28 անդամներ:

Դեկանի ժ/պ տիկին Մարինե Ցաղուբյանը ողջունեց գործընկերներին և անցավ օրակարգի առաջին հարցին՝2025-2026 ուս. տարվա առկա ուսուցման 1-ին քննաշրջանի արդյունքների ամփոփմանը: Ամփոփ կերպով նշվեց բակավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերում սովորող ուսանողների գրանցաց արդյունքները: Օրակարգի երկրորդ հարցի՝ մագիստրոսական թեզերի պաշտպանության հետ կապված աշխատանքների կատարման ընթացքի քննարկման առումով նշվեց, որ ամեն ինչ ընթանում է իր բնականոն հունով:

Օրակարգի երրորդ հարցը վերաբերում էր անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողներին: Միաձայն քվեարկության արդյունքում որոշվեց.

1. **Ալմազյան Հասմիկ Նորայրի**- «Լեզվաբանություն» մասնագիտություն «Թարգմանչական գործ»՝ «Անգլերեն և հայերեն» բակալավրի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողուհի (Վ. Սարոյանի անվան կրթաթոշակ):
2. **Ստարցեվա Մերի Միխայիլի** - «Լեզվաբանություն» մասնագիտություն, «Անգլերեն և գերմաներեն հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի (Ֆ. Վերֆելի անվան կրթաթոշակ):
3. **Փարսադանյան Արեն Արսենի** -«Լեզվաբանություն» մասնագիտություն, «Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանող (Հ. Աճառյանի անվան կրթաթոշակ):

Օրակարգի չորրորդ հարցը վերաբերում էր հայցորդների ատեստավորմանը:

ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի 3-րդ տարվա առկա ասպիրանտ **Անի Արթուրի Միքայելյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հաշվետու ժամանակահատվածում Ա. Միքայելյանի կողմից քննվել և վերլուծության են ենթարկվել ատենախոսության համար տեսական հիմք հանդիսացող մի շարք մասնագիտական ուսումնասիրություններ, հավաքվել է պահանջված դասընթացների կրեդիտները, տպագրության է պատրաստել 2 գիտական հոդված: Նշվեց, որ Անի Միքայելյանի թեկնածուական ատենախոսության թեման է **««Նոր աշխարհի» պատկերացումը ըստ Օ. Հաքսլիի և Ջ. Օրուելի վեպերի** /ղեկ. պրոֆ. Տ. Սիմյան/: Ա. Միքայելյանը 26.08.2022-ից գտնվել է երեխայի խնամքի արձակուրդում, վերականգնվել է 10.04.25-ին: Հետազոտվել են Օլդոս Հաքսլիի «Չքնաղ նոր աշխարհ», «Կապիկ և էություն» և Ջորջ Օրուելի «1984» և «Անասնաֆերմա» վեպերը դիտարկելով դրանք որպես դիստոպիական մտածողության առանցքային տեքստեր:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը, երաշխավորել արտասահմանյան գրականության ամբիոնի 3-րդ տարվա առկա ասպիրանտ **Անի Արթուրի Միքայելյանին** ատեստավորման՝ Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ:Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի 1-ին տարվա հայցորդ **Մարիաննա Սամվելի Եփրեմյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նշվեց, որ Մ. Եփրեմյանի թեկնածուական ատենախոսության թեման է **«Էդուարդո Մենդոսայի ստեղծագործության հիմնական միտումները** /ղեկ. դոց. Ն. Գոնչար-Խանջյան/: Հաշվետու ժամանակահատվածում հայցորդը կազմել է հետազոտական աշխատանքի նախնական պլան՝ հիմնվելով Է. Մենդոսայի առանցքային 4 վեպերի ուսումնասիրության վրա, տպագրել է մեկ գիտական հոդված Երևանի կինոյի և թատրոնի պետինստիտուտի «Գիտամեթոդական հոդվածների ժողովածու» հանդեսում, պատրաստում է 2-րդ գիտական հոդվածը Մենդոսայի վեպերից մեկի հետազոտության հիման վրա: 2025-2026 ուստարվա հայցորդության ուսումնառության 1-ին տարվա ընթացքում հավաքել է 29 կրեդիտ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը, երաշխավորել արտասահմանյան գրականության ամբիոնի 1-ին տարվա հայցորդ **Մարիաննա Սամվելի Եփրեմյանին** ատեստավորման՝ Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի 4-րդ տարվա հայցորդ **Ալվարդ Սամվելի Մայիլյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նշվեց, որ Ալվարդ Մայիլյանի թեկնածուական ատենախոսության թեման է **«Ժամանակը և տարածությունը Ժ.Պ. Սարտրի գեղարվեստական տիրույթում»** /գիտական ղեկավար բ.գ.թ., պրոֆ. Անուշ Սեդրակյան/: Հաշվետու ժամանակահատվածում հայցորդը մասնակցել է պարտադիր դասընթացներին՝

հավաքելով համապատասխան կրեդիտներ, պատրաստ են նաև ատենախոսության երկու գլուխները՝ շուրջ 150 էջ ծավալով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Երաշխավորել արտասահմանյան գրականության ամբիոնի 4-րդ տարվա հայցորդ **Ալվարդ Սամվելի Մայիլյանին** ատեստավորման՝ Ժ.01.07. «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Աննա Սարգսյանի ատեստավորման հարցը՝ «Լեզու-գենդեր հարաբերակցության հանրալեզվաբանական ուսումնասիրությունը ամերիկյան հեռուստաշարքում (հայերենի զուգադրությամբ)» թեմայով (գիտական ղեկավար Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Քրիստինե Հարությունյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հայցորդը մասնակցել է 2023 թ. գարնանային և աշնանային կիսամյակներում կրեդիտային դասընթացներին և կուտակել համապատասխան կրեդիտները: 2024թ. գարնանային կիսամյակում մասնակցել է «Համալսարանական դասավանդման դիդակտիկա» դասընթացին: Հավաքել է պարտադիր դասընթացներից անհրաժեշտ 12 կրեդիտ և ընտրովի դասընթացներից՝ 21: Ղեկավարի հետ համատեղ 2024 թվականի օգոստոսին Եվրոպական համալսարանի գիտական հոդվածների ժողովածուում տպագրել է առաջին հոդվածը՝ «Լեզու-գենդեր ուսումնասիրման մոտեցումներն ու տեսությունները», իսկ 2024 թվականի դեկտեմբերին *Armenian Folia Anglistika* հանդեսում տպագրել է համատեղ երկրորդ հոդվածը՝ «Գենդերլեկտի լեզվաբանական դրսևորումները «Էմիլին Փարիզում» հեռուստասերիալում»: 2025 թվականի օգոստոսին *Armenian Folia Anglistika* հանդեսի տպագրությանն է ներկայացրել երրորդ՝ «Գենդերլեկտը ամերիկյան եվ հայկական հեռուստասերիալներում» հոդվածը, իսկ 2026 թվականի հունվարին *Foreign Languages in Higher Education* հանդեսի տպագրությանն է ներկայացրել չորրորդ՝ «Գենդերլեկտի լեզվաբանական դրսևորումները «Էլենի օրագիրը» հեռուստասերիալում» հոդվածը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը, երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Աննա Սարգսյանին** ատեստավորման (մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ):Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանացիրության ամբիոնի հայցորդ **Նելլի Այվազյանի** ատեստավորման հարցը՝ «Քաղաքական դիսկուրսը փաստերի և հույզերի փոխհատման տիրույթում (անգլերեն և ֆրանսերեն քաղաքական խոսքի զուգադիր քննության հենքի վրա)» թեմայով (գիտական ղեկավար Անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Սեդա Գասպարյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են քաղաքական դիսկուրսի, պերսուազիայի, հուզական լեզվաբանության և քննադատական դիսկուրսի վերլուծության վերաբերյալ որոշակի թվով հիմնարար աշխատություններ (Թ. վան Դեյք, Ռ. Վոդակ, Ն. Ֆերլաֆ, Վ. Չերնյավսկայա, Ե.

Շեյգալ և այլն):Ատենախոսական աշխատանքի շրջանակում գիտական ղեկավարի հետ համատեղ գրվել է գիտական 1 հոդված՝ «Մտաշահարկման բառային-իմաստաբանական միջոցները քաղաքական դիսկուրսում» թեմայով: Հոդվածը տպագրվել է «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսի Vol. 29 No. 2(39) (2025) համարում: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ատենախոսական աշխատանքի տեսական, մեթոդաբանական և վերլուծական հիմքը ձևավորող աշխատանք, ինչպես նաև հրատարակվել է 1 գիտական հոդված և շուտով պատրաստ կլինի 2-րդ հոդվածը, որը կներկայացնի հետազոտության ընթացիկ արդյունքների գիտական արժեքը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը, երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Նելլի Այվազյանին** ատեստավորման (մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ):Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանացիրության ամբիոնի հայցորդ **Միլենա Ավետիսյանի** ատեստավորման հարցը՝ «Բույսերի եվ կենդանիների անուններով ոճական հնարները Ջերալդ Դարելի ստեղծագործություններում (իտալերենի զուգադրությամբ)» թեմայով (գիտական ղեկավար Անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Սեդա Գասպարյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Քննության առարկա դարձնելով լեզվառճական հնարների կիրառությունը՝ որոնք լայնորեն ներկայացված են Ջերալդ Դարելի ստեղծագործություններում, ուսումնասիրությունը կենտրոնանում է դրանց կառուցվածքային և գործառական առանձնահատկությունների վրա: «Znanstvena misel journal» գիտական հանդեսում հրատարակվել է մեկ հոդված «Language in serve of eco-environment» վերնագրով: Հաշվետու ժամանակահատվածում հայցորդը աշխատել է երկրորդ հոդվածի վրա, որն արդեն պատրաստ է հրատարակման: Երկրորդ հոդվածում առանձնացված են *My Family and Other Animals և The Whispering Land* վեպերում առկա այն բաժինները, որոնց մանրամասն վերլուծության արդյունքում ներկայացված է, թե ինչպես է Դարելը օգտագործում նմանություններն ու փոխաբերությունները՝ մարդկային կերպարներին կենդանիներին բնորոշ հատկանիշներով օժտելու համար: Հայցորդը մասնակցել է բոլոր պարտադիր կրեդիտային դասընթացներին, հանձնել է նախատեսված բոլոր քննությունները և ստուգարքները, լրացրել է դասընթացների համար սահմանված 32 կրեդիտը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը, երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Միլենա Ավետիսյանին** ատեստավորման (մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ):Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Նանե Դավթյանի ատեստավորման հարցը՝ «Մտացածին տեղանունները բրիտանական և հայկական լեզվամշակույթներում» թեմայով (գիտական ղեկավար Անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ. Ալվարդ Ջիվանյան):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Նշվեց, որ ատենախոսությունը կառուցված է լինելու չորս գլուխներից, ներածությունից, եզրակացությունից, գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածից, որտեղ ընդգրկված կլինեն բրիտանական և հայկական լեզվամշակույթներում շրջանառվող մտացածին տեղանվանացանկեր:

Առաջին գլխում ներկայացվել են տարբեր տեսաբանների՝ փիլիսոփաների, լեզվաբանների, լեզվամշակութաբանների, բանագետների, տեղանվանագետների մոտեցումները, երկրորդ գլուխը կներկայացնի մտացածին տեղանունների հնարավոր դասակարգումներն ու կառուցվածքային առանձնահատկությունները, երրորդ գլխում խոսվելու է մտացածին տեղանունների վերաբերության՝ ռեֆերենցիայի մասին, որ դիտարկվելու է հայկական և բրիտանական ժողովրդական և հեղինակային հեքիաթների տիրույթում: Չորրորդ գլխում կընդգծվեն մտացածին տեղանունների լեզվավոճական առանձնահատկությունները: Դրանք կդիտարկվեն որպես հրաշապատում ժանրի գերակա դարձույթ: Հավելվեց,որ հեքիաթներից առանձին ցանկերով դուրս են գրվել հայկական և բրիտանական մի շարք տեղանուններ և ուսումնասիրվել է դրանց ծագումն ու կառուցվածքային առանձնահատկությունները: Երկու տարվա հայցորդության ընթացքում հայցորդը մասնակցել է 7 դասընթացի և կուտակել պարտադիր 30 կրեդիտից 24-ը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը, երաշխավորել անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ **Նանե Դավթյանին** ատեստավորման (մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ): Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի Անգլերենի թիվ 2 ամբիոնի հայցորդ Լիլիթ Ավդալյանի հաշվետվությունը 2025 թվականին կատարած աշխատանքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլերենի թիվ 2 ամբիոնի վարիչ բ.գ.դ. պրոֆեսոր Ե. Երզնկյանը նշեց, որ հայցորդը առցանց ձևաչափով է ներկայացրել հաշվետվությունը, քանզի ուներ համապատասխան թույլտվություն և Էրազմուս+ ծրագրի շրջանակներում գտնվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հալլե Վիթենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարանում, որտեղ իրականացնում է հետազոտական աշխատանք: Հաշվետվետու ժամանակահատվածում Լիլիթ Ավդալյանը մասնակցել է Անգլերեն լեզու (4 կրեդիտ), Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ (4 կրեդիտ), Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն (3 կրեդիտ), Գիտաչափություն (3 կրեդիտ) դասընթացներին: Ուսումնասիրել և մշակել է հետազոտության թեմայի («Կորպորատիվ խոսույթը որպես կազմակերպության կերպարի խթանման գործիք») վերաբերյալ գրականություն, որը կարտացոլվի ատենախոսության ինչպես տեսական, անպես էլ գործնական գլուխներում: Ներկայումս ակտիվ զբաղվում է

հետազոտության գործնական/վերլուծական հատվածի նյութերի հավաքագրմամբ (ամերիկյան և բրիտանական խոշոր կազմակերպությունների տարեկան զեկույցներ և աշխատանքի հայտարարության տեքստեր), ինչպես նաև վերջիններիս լեզվագործաբանական վերլուծությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Բավարար համարելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Անգլերենի թիվ 2 ամբիոնի հայցորդ Լիլիթ Ավդալյանին(մասնագիտություն՝ Ժ.02.07 Ռոմանագերմանական լեզուներ):Որոշումն ընդունվեց միաձայն:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

Միաձայն քվեարկությամվ որոշեցին.

- Երաշխավորել արտասահմանյան գրականության ամբիոնի ասիստենտ, բ. գ. թ. **Ամալյա Արմենի Սողոմոնյանին՝** դոցենտի գիտական կոչման ներկայացնելու համար:
- Երաշխավորել թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի բ.գ.թ., դոցենտ **Իշխան Դաղյանի՝** «Գրական երազը անգլալեզու մանկագրության մեջ» վերնագրով մենագրությունը տպագրման:

ԵԼՀ ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար և

գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ.Հ.Յաղուբյան

Գիտխորհրդի քարտուղար,
բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

26.01.2026 թ.